



Արթուր ՂԱՄԲԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի պետության և իրավունքի
ընտրության ու պարունության ամբիոնի վարիչ,

ՀՀ վաստակավոր իրավաբան, իրավ. գիյր. դոկտոր, պրոֆեսոր

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԿՉԲՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՏԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՆԶԻԱՆՏԵՐԸ ԵՎ ՆԵՐՏԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԿՈՆՖԼԻԿՏԵՐԸ

I. Ներածություն

1.1. *Տերմիններ և հասկացություններ*: «Իրավունքի սկզբունք» հասկացությունը, կախված իրավաբանական միջավայրից, մեկնաբանվում է տարբեր կերպ. մի դեպքում որպես պոզիտիվ իրավունքում ամրագրված իրավական նորմ, մեկ այլ դեպքում՝ օբյեկտիվորեն գոյություն ունեցող իրավական գաղափար, որն իր մարդասիրական բովանդակության ուժի շնորհիվ ձեռք է բերում նորմատիվություն: Կարծում ենք, որ իրավունքի սկզբունքները պոզիտիվ իրավունքում տեքստային (անմիջական) և իմաստային (միջնորդավորված) եղանակով ամրագրված ընդհանուր իրավական գաղափարներ (նորմեր) են: Նույնիսկ պոզիտիվ իրավաբանական դեպքում, իրավունքի սկզբունքների ամրագրման եղանակը չպետք է նեղ մեկնաբանել: Իրավունքի սկզբունքները կարող են բխել ոչ միայն օրենքի տեքստից (հոդվածներից), այլև իրավական նորմերի ընդհանուր բովանդակությունից, Սահմանադրության և այլ նորմատիվ իրավական ակտերի նախաբանից (պրեամբուլայից): Իրավունքի սկզբունքները կարող են ամրագրվել նաև իրավունքի այլ աղբյուրներում՝ դատական ակտերում, նորմատիվ պայմանագրերում և այլն:

Հաճախ փորձ է արվում նաև տարբերակել «իրավունքի սկզբունք», «իրավական արքետոմա» և «իրավական կանխավարկած» հասկացությունները: Թեև դրանց միջև առկա են որոշ նուրբ տարբերություններ, սակայն, մեծ հաշվով, այդ հասկացությունները նույնաբանությամբ են (իրավական արքետոմաներն իրավունքի սկզբունքների գաղափարական հենքն

են, իսկ իրավական կանխավարկածները հաճախ օրենսդրության մեջ ամրագրվում են որպես իրավունքի սկզբունքներ և այլն):

Բացի դրանից՝ իրավունքի սկզբունքները հաճախ նույնացվում են մարդու իրավունքների կամ մարդու իրավունքների երաշխիքների հետ, օրինակ՝ Սահմանադրությամբ նախատեսված մարդու մի շարք իրավունքներ (իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը և այլն) դատավարական օրենսդրության մեջ ամրագրված են որպես դատավարության սկզբունքներ (իրավաբանական օգնություն ստանալու սկզբունք և այլն):

Հաշվի առնելով սույն աշխատանքի ուսումնասիրության առարկան՝ հեղինակը վերացարկվել է այս հասկացությունների միջև առկա նուրբ տարբերություններից:

Սույն աշխատանքում իրավունքի սկզբունքների և իրավական այլ նորմերի (սկզբունքների համակարգից դուրս գտնվող նորմերի) միջև հակասությունը բնութագրելու համար կօգտագործվի «իրավական կոլիզիա» հասկացությունը (արտահամակարգային *կոլիզիա*), իսկ իրավունքի սկզբունքների միջև (սկզբունքների համակարգի ներսում) մրցակցությունը բնութագրելու համար՝ «իրավունքի սկզբունքների կոնֆլիկտ» կամ «մրցակցություն» հասկացությունները (ներհամակարգային *կոնֆլիկտ*): Բանն այն է, որ իրավունքի սկզբունքների (մարդու իրավունքների) միջև մրցակցության (ներհամակարգային կոնֆլիկտի) դեպքում սկզբունքները (մարդու իրավունքները) «a priori» միմյանց չեն

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2019 1 - 2 (235-236)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



բացառում, պարզապես միևնույն օբյեկտի կամ հարաբերության նկատմամբ մի սկզբունքի (մարդու իրավունքի) իրագործումն արգելափակում է կամ սահմանափակում է մեկ այլ սկզբունքի (մարդու իրավունքի) գործողությունը: Հենց այս հանգամանքով է պայմանավորված, որ իրավունքի սկզբունքների (մարդու իրավունքների) միջև կոնֆլիկտների դեպքում, որպես կանոն, կիրառվում են ոչ թե ավանդական կոլիզիոն նորմերը (lex superior, lex specialis և այլն) այլ հավասարակշռման (weighing and balancing) մեթոդը, որը չի ենթադրում միմյանց հետ կոնֆլիկտի մեջ գանձվող սկզբունքներից որևէ մեկի անվավերություն¹: Ռ. Ալեքսինույնպես տարբերակում է նորմ-կանոնների և նորմ-սկզբունքների կոլիզիաների (կոնֆլիկտների) լուծման մեթոդաբանությունը: Նա նշում է, որ նորմ-կանոնների միջև կոլիզիան լուծվում է դրանցից բացառություն սահմանելով կամ նորմերից որևէ մեկն անվավեր ճանաչելով: Նորմ-սկզբունքների միջև կոնֆլիկտի դեպքում անհրաժեշտ է որոշել, թե սկզբունքներից ո՞րն է առավել ծանրակշիռ: Եթե երկու սկզբունքների կոնֆլիկտի արդյունքում առաջինը գերակշռում է, դա չի նշանակում, որ երկրորդ սկզբունքը ճանաչվում է անվավեր, կամ նրանից արվում է բացառություն: Հակառակը՝ մեկ այլ իրավիճակում կշռումը կարող է հանգեցնել հակադիր արդյունքի, այսինքն՝ երկրորդ սկզբունքը կարող է գերակշռել առաջինին²:

1.2. Իրավունքի սկզբունքների կոլիզիոն-իրավական ուսումնասիրության վիճակը: Կոլիզիոն իրավունքի տեսության տեսանկյունից իրավունքի սկզբունքները հիմնականում քննարկվել են հետևյալ երկու հարթություններում.

առաջին՝ իրավունքի սկզբունքների (դրանցից բխող նորմերի) և իրավական այլ նորմերի հակասությունը և դրանց լուծման ուղիները,

երկրորդ՝ իրավունքի սկզբունքներից կատարված բացառությունները՝ որպես իրավական հակասություն դիտելու հար-

ցերը:

Եվրոպական երկրներում այժմ արդիական է իրավունքի սկզբունքների (մարդու հիմնական իրավունքների) կոնֆլիկտի (մրցակցության) հարցերը: Իրավաբանները կարևորում են հատկապես մարդու հիմնական իրավունքների կոնֆլիկտները լուծելու ուղիները³: Սուբյեկտիվ իրավունքների կոնֆլիկտները ուսումնասիրվել են նաև հռոմեական իրավունքում և նախահեղափոխական ժամանակաշրջանի ռուսական քաղաքացիական իրավունքում (այն անվանում էին՝ իրավունքների կոլիզիա, իրավունքների գուգադիպություն)⁴: Խորհրդային ժամանակաշրջանում առանձին մասնագետներ անդրադարձել են մասնավոր իրավունքների, պետության հանրային իրավունքների և անհատի հանրային ու մասնավոր իրավունքների կոլիզիաներին (այս մասին հաջորդիվ)⁵:

Հետխորհրդային պետություններում իրավունքի սկզբունքների, այդ թվում՝ մարդու հիմնական իրավունքների կոնֆլիկտների հարցերին առավելապես անդրադարձ է կատարվում սահմանադրական դատարանների որոշումներում և այնտեղ աշխատող իրավաբան գիտնականների տեսական աշխատանքներում, սակայն իրավունքի սկզբունքների ներհամակարգային կոնֆլիկտների վերաբերյալ տեսական դատողությունները խորքային չեն: Կարծում ենք, որ իրավունքի սկզբունքների, այդ թվում՝ մարդու իրավունքների միջև կոնֆլիկտները սահմանադրական իրավունքի և մարդու իրավունքների տեսության արդի հարցերից են:

II. Իրավունքի սկզբունքների արտահամակարգային կոլիզիաները

2.1. Իրավունքի սկզբունքների և իրավական այլ նորմերի կոլիզիաները (արտահամակարգային կոլիզիաները)

(ա) Իրավունքի սկզբունքների (դրանցից բխող նորմերի) և իրավական այլ նորմերի կոլիզիաների լուծման ուղիները: Իրավունքի սկզբունքների (դրանցից



բխող նորմերի) և իրավական այլ նորմերի միջև կոլիզիա առաջանալու դեպքում ո՞ր նորմին պետք է նախապատվություն տալ: Առանձին հեղինակներ կարծում են, որ օրենքը, իր գործողությամբ կամ կիրառմամբ, սկզբունքի նկատմամբ ունի նախապատվություն, սկզբունքը օրենքի համեմատությամբ միշտ ունի օժանդակ, ոչ ինքնուրույն և լրացնող բնույթ⁶: Հեղինակների մեկ այլ խումբ թեև տեսականորեն կարծում է, որ նման կոլիզիայի դեպքում իրավունքի սկզբունքները պետք է ունենան գերակայություն, սակայն դրանց պոզիտիվ իրավական տեսանկյունից նախապատվություն տալու հարցը դիտարկում են ոչ թե որպես գոյություն ունեցող իրողություն, այլ որպես ապագայի հարց: Այսպես՝ ռուս դատավարագետներից մեկը նշում է. «Բացառված չէ, որ ապագայում օրենսդրությամբ ճանաչված նորմ-սկզբունքները դատական պրակտիկայում քրեադատավարական այլ նորմերի համեմատությամբ կունենան բարձր իրավաբանական ուժ»⁷: Հեղինակն ավելացնում է, որ ֆրանսիական դոկտրինում նույնպես քննարկվում է իրավունքի սկզբունքներին հատուկ իրավաբանական ուժով օժտելու հարցը:

Ժամանակակից իրավունքի տեսության մեջ հաճախ նշվում է, որ իրավունքի սկզբունքներն իրականացնում են իրավական հակասությունների վերացման գործառույթ: Օրինակ՝ իրավունքի սկզբունքներին նվիրված հիմնարար մեծագրություններից մեկում կարդում ենք հետևյալ միտքը. «Իրավունքի սկզբունքների ներքին գործառույթն է ներգործել իրավական նորմերի համակարգի վրա, ինչով ապահովվում է նրա անհակասականությունը և համաձայնեցվածությունը: Բոլոր նորմատիվ կարգադրագրերը պետք է տրամաբանորեն բխեն սկզբունքների բովանդակությունից և **խստագույնս համապատասխանեն դրան**: Իրավունքի սկզբունքների արտաքին գործառույթը հասարակական հարաբերությունների սուբյեկտի վարքագծի անմիջական կարգավորումն է, օրինակ՝ օրենքից բա-

ցի՝ **իրավական նորմերի անհամապատասխանության դեպքում** իրավակիրառողը պետք է ղեկավարվի իրավունքի սկզբունքներով»⁸ (ընդգծումը՝ հեղ.): Իրավունքի սկզբունքներին նվիրված մեկ այլ ժողովածույում նշված է. «Նորմերի և իրավունքի սկզբունքների կոլիզիայի դեպքում, որոշումը պետք է կայացնել՝ հիմք ընդունելով իրավունքի սկզբունքները, իսկ նորմերը պետք է քննարկել օրենքին համապատասխանելու տեսանկյունից: Նկատի ունենալով, որ հենց «սկզբունքներն» են հանդիսանում հիմնարար սկզբունքները, հիմունքները, առաջնահերթությունները և կողմնորոշիչները, որոնք օժտված են համընդհանրությամբ, ունեն սոցիալ-իրավական նշանակություն, ուստի դրանք կազմում են իրավական կոլիզաների վերացման կառուցակարգի բովանդակությունը»⁹: Վ. Երշովը նշում է. «Դատարանները միջազգային և (կամ) ներպետական իրավունքի սկզբունքները կարող են կիրառել իրավական նորմերի միջև առկա հակասությունների (կոլիզիաների) դեպքում, ինչը հնարավորություն կտա առավել քաղաքավարի և արդյունավետ կարգավորելու կոնկրետ վիճելի հարաբերությունները»¹⁰:

Տ. Կաշանինան իրավունքի սկզբունքների կարգավորիչ գործառույթների շարքում նշում է նաև իրավունքում հակասությունների վերացումը¹¹, սակայն հեղինակը չի մեկնաբանում այս գործառույթի իրականացման կառուցակարգերը, այլ քննարկում է իրավական կոլիզիաների ընդհանուր հարցեր: Մեկ այլ դեպքում նշվում է, որ նորմերի համակարգում սահմանադրական սկզբունքներն ամրագրող նորմերին տրվում է հատուկ տեղ, նրանք ունեն ավելի բարձր աստիճան (ռանգ)¹²: Այս պարագայում էլ չի հասկացվում՝ «բարձր աստիճան» ասելով հեղինակը ի՞նչ նկատի ունի, արդյո՞ք դա նշանակում է, որ սկզբունքները մյուս նորմերի համեմատությամբ ունեն բարձր իրավաբանական ուժ:

Հեղինակների մեկ այլ խումբ, որը իրավունքի հիմնարար սկզբունքները դի-



տում է որպես իրավունքի ինքնուրույն աղբյուր, կարծում է, որ իրավունքի աղբյուրների հիերարխիկ համակարգում իրավունքի հիմնարար սկզբունքներն ունեն առաջնային դեր: Օրինակ՝ Վ. Վ. Երշովն իրավունքի հիմնարար սկզբունքները դիտում է որպես անվիճելի (неоспоримый) իրավունք (jus cogens), որոնք պարտադիր են ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ մարմինների համար: Նա առաջարկում է Սահմանադրությունում և այլ օրենքներում ամրագրել ռուսական իրավունքի ձևերի հետևյալ հիերարխիան՝ իրավունքի հիմնարար սկզբունքներ, նորմատիվ իրավական ակտեր, նորմատիվ իրավական պայմանագրեր և իրավական սովորույթներ¹³: Հեղինակն իրավունքի հիմնարար սկզբունքների և իրավունքի այլ աղբյուրների հակասությունը որակում է որպես հիերարխիկ կոլիզիա, ուստի այն պետք է լուծել «lex superior» կոլիզիոն նորմի հիման վրա:

Այսպիսով, կարելի է փաստել, որ իրավաբան գիտնականները, ընդհանուր առմամբ, միակարծիք են, որ իրավունքի սկզբունքների և իրավական այլ նորմերի (կամ իրավունքի այլ աղբյուրների) միջև կոլիզիայի դեպքում իրավունքի սկզբունքներն ունեն գերակայություն: Գիտական ճշմարտության հավակնող այս թեզը, կարծում ենք՝ պետք է ստանա պոզիտիվ իրավական (նորմատիվ) ամրագրում:

Հայկական իրավունքում սկզբունքների (դրանցից բխող նորմերի) և իրավական այլ նորմերի հակասության դեպքում իրավունքի սկզբունքներին (դրանցից բխող նորմերին) նախապատվություն տալու գաղափարը ստացել է պետական ճանաչում: Այսպես՝ ՀՀ սահմանադրական դատարանը 16.04.2013 թ. ՍԳՈ-1081 որոշմամբ նշել է. «Սահմանադրությունն ինքնաբավ է և տեքստային առերևույթ անհամապատասխանությունները կարող են հաղթահարվել Սահմանադրության արժեքանության ու հիմնարար սկզբունքների վրա հենվելով»: ՀՀ սահմանադրական դատարանը նույնպես կարծում է, որ ՀՀ Սահմանադրության մեջ տեքստային

անհամապատասխանությունների առկայության դեպքում այն պետք է լուծել՝ նախապատվություն տալով հիմնարար սկզբունքներին, որոնք առավելապես արտացոլված են Սահմանադրության՝ «Սահմանադրական կարգի հիմունքներ» գլխում: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի (ուժը կորցրել է 2018 թ.) 24-րդ հոդվածի 5-րդ կետի 1-ին նախադասության մեջ ամրագրված էր, որ նույն իրավական ակտերի տարբեր մասերի միջև հակասության դեպքում գործում են այն մասի դրույթները, որոնք բխում են տվյալ իրավական ակտի էությունից կամ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող **իրավունքի սկզբունքներից** (ընդգծումը՝ հեղ.)¹⁴: Այս հոդվածից բխում էր.

առաջին՝ եթե երկու նորմ հակասում են միմյանց, ապա կիրառվում է այն նորմը, որը բխում է տվյալ ոլորտի իրավունքի սկզբունքից,

երկրորդ՝ եթե որևէ իրավական նորմ անմիջականորեն հակասում է իրավունքի սկզբունքին, ապա գործում է վերջինս¹⁵: Օրինակ՝ ՀՀ վճարեկ դատարանը 24.02.2011 թ. թիվ ԱՎԳ/0002/11/10 որոշմամբ անդրադարձել է ՀՀ քր. դատ. օր.-ի 23-րդ (դատավարության մրցակցության սկզբունք) հոդվածի և 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հակասությանը: ՀՀ քր. դատ. օր.-ի 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված է պաշտպանի և դատավարության մասնակիցների՝ վճարեկ բողոք բերելու իրավունք, իսկ մեղադրող դատախազի համար նախատեսված չէ ՀՀ վերաքննիչ դատարանի ակտը բողոքարկելու լիազորություն: ՀՀ վճարեկ դատարանը նշել է. «ՀՀ քր. դատ. օր.-ի 23-րդ հոդվածում ամրագրված մրցակցության սկզբունքի կարգավորումից բխում է, որ կողմերի մրցակցային իրավունքների, իրենց դիրքորոշումը պաշտպանելու հնարավորությունների սահմանափակումները կարող են հիմնավորվել բացառապես ողջամիտ իրավական շահերով: Մինչդեռ մրցակցային դատավարությունում մեղադրանքի կողմը ներկայացնող հիմնական սուբյեկտին՝

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2019 1 - 2 (235-236)

ԴԱՏԱՎԱՐ
Իշխանություն



դատախազին, վճռաբեկ բողոքարկման իրավունքով չօժտելը, պաշտպանության կողմի բոլոր սուբյեկտներին այդ իրավունքով օժտելու պայմաններում, որևէ ողջամիտ իրավական շահով չի հիմնավորվում: ՀՀ քր. դատ. օր.-ի 404-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը դատախազին վճռաբեկ բողոքարկման իրավունք չտրամադրելու մասով հակասում է ՀՀ քր. դատ. օր.-ի 23-րդ հոդվածին»: ՀՀ վճռաբեկ դատարանը որոշել է, որ այս դեպքում գործում է ՀՀ քր. դատ. օր.-ի 23-րդ հոդվածում ամրագրված դրույթը (մրցակցության սկզբունքը): Պետք է հստակեցնել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը այս հակասությունը լուծելիս վկայակոչել է ոչ թե «Իրավական ակտերի մասին» 2002 թ. ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ մասի *առաջին նախադասությունը* (իրավունքի սկզբունքներից բխող դրույթների նախապատվությունը), այլ բննարկվող հոդվածի 5-րդ մասի *երկրորդ նախադասությունում* ամրագրված՝ օրենքի ընդհանուր և հատուկ մասերի միջև հակասության դեպքում ընդհանուր մասի դրույթներին նախապատվություն տալու կարգավորումը: Այս պարագայում ծագում է տեսական նշանակության մեկ այլ հարց՝ ինչո՞վ է պայմանավորված նույն օրենքի ընդհանուր և հատուկ մասերի հակասության դեպքում ընդհանուր մասի դրույթներին նախապատվություն տալու մասին լայն տարածում ունեցող մոտեցումը: Դա կարելի է բացատրել մաս այն հանգամանքով, որ իրավունքի ճյուղի էությունն արտահայտող սկզբունքներն ամրագրվում են օրենքների ընդհանուր մասում, ուստի ընդհանուր և հատուկ մասերի հակասության դեպքում պետք է նախապատվություն տալ իրավունքի սկզբունքներն արտացոլող ընդհանուր մասի դրույթներին:

Իրավունքի սկզբունքների (դրանցից բխող նորմերի) և իրավական այլ նորմերի հակասության դեպքում իրավունքի սկզբունքներին (դրանցից բխող նորմերին) նախապատվություն տալու հանգամանքը պայմանավորված է իրավունքի սկզբունքների բովանդակությամբ:

Իրավունքի սկզբունքների ուժը բխում է ոչ այնքան սկզբունքների օրենսդրական ամրագրումից (պոզիտիվացումից), այլև նրանից, որ սկզբունքներն ընդունված են ողջ մարդկության կողմից, արտացոլում են համամարդկային արժեքներ, պարունակում են արքետոմատիկ ճշմարտություններ, հիմնված են կոնկրետ ժամանակի և տարածության մեջ ընդունված բարոյական նորմերի վրա: Եթե իրավունքի սկզբունքների (դրանցից բխող նորմերի) հակասության դեպքում նախապատվություն տրվեր նրանց հակասող նորմերին, ապա դա կնշանակեր հակառակ գնալ ողջ մարդկությանը, պահանջել ապացուցել ապացուցման կարիք չունեցող պարզ տրամաբանական ճշմարտությունները, վերացնել իրավունքի բարոյական հիմքերը: Չենք կարծում՝ որևէ անձ մասն երկրնտրանքի դեպքում (կիրառել իրավունքի սկզբունքը, թե նրանց հակասող իրավական նորմը) խիզախություն կունենա նախապատվություն տալ սկզբունքներին հակասող իրավական նորմին՝ հակառակվելով համամարդկային արժեքներին, դեմ գնալով տարրական տրամաբանությանը և կասկածի տալ դնելով իրավունքի սկզբունքներում արտացոլված պարզ ճշմարտությունները: Թերևս նշվածով է պայմանավորված այն, որ առանձին հեղինակներ նշում են. «Իրավունքի որոշ սկզբունքներ իրենց բնույթով շրկող սկզբունքներ են (*корректирующие принципы*). նրանք սրբագրում են (շտկում են) օրենքի ամուսից կայացվող որոշումները, որոնք առանց ուղղելու կարող են լինել անարդար կամ հասարակության նպատակներին չհարմարեցված»¹⁶:

Զննարկվող իրավիճակներում իրավունքի սկզբունքներն այն չափորոշիչներն են, որոնց հիման վրա իրականացվում է «*contra legem*» (օրենքին հակառակ) իրավակիրառում: Եթե իրավակիրառող որոշում է գործել օրենքին հակառակ, ապա նրա կայացրած իրավակիրառ ակտերը պետք է հստակ բխեն իրավունքի սկզբունքներից, պետք է տեսանելի լինի, որ «*contra legem*» իրավակիրառ



ակտերի հիմքում դրված են իրավունքի սկզբունքները: «Contra legem» իրավակիրառ ակտերը պետք է պաշտպանված լինեն իրավունքի սկզբունքների բարձր և հեղինակավոր ուժով:

(բ) Իրավունքի սկզբունքներից բացառությունները. հակասություն, թե՞ օրինաչափություն: Իրավունքի սկզբունքները, հանդիսանալով ընդհանուր գաղափարներ, ենթադրում են բացառություններ¹⁷: Օրինակ՝ երկար տարիներ գրականության մեջ քննարկվում է այն հարցը, թե արդյո՞ք պաշտոնատար անձանց ինուսիտետով օժտելու մասին իրավական նորմերն օրենքի առաջ հավասարության սկզբունքին հակասող դրույթներ են, թե՞ այդ սկզբունքից կատարված իրավաչափ բացառություններ են¹⁸:

Իրավունքի սկզբունքները չեն կարող չունենալ բացառություններ, հակառակ դեպքում, կարգելափակվի հասարակական հարաբերությունները դիֆերենցված (տարբերակված) կարգավորելու օբյեկտիվ անհրաժեշտությունը: Իրավունքի սկզբունքներից բացառություններ սահմանելը պետք է համապատասխանի *որոշակիության* և *իրավաչափության* պահանջներին:

Իրավունքի սկզբունքից կատարված բացառությունը *որոշակի է*, եթե իրավական տեխնիկայի տեսանկյունից այն ձևակերպված է այնպես, որ իրավասու մարմնի համար հստակ է, որ գործ ունի ընդհանուր կանոնից (սկզբունքից) արված բացառության և ոչ թե երկու նորմերի հակասության հետ: Իրավական տեխնիկայի տեսանկյունից իրավունքի սկզբունքներից կատարված բացառությունը համապատասխանում է որոշակիության պահանջին հետևյալ դեպքերում:

Առաջին՝ եթե իրավունքի սկզբունքը և դրանից արված բացառությունն ամրագրված են նորմատիվ իրավական ակտի տարբեր հոդվածներում (կամ տարբեր նորմատիվ ակտերում), ապա սկզբունքի վերաբերյալ հոդվածում պետք է նախատեսել սկզբունքից բացառության

մասին վերապահում (բացարձակ որոշակի վերապահում): Օրինակ՝ ՀՀ-ում ընտրություններն անցկացվում են ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքի հիման վրա, *բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի*: Եթե օրենքի մեկ այլ հոդվածով կամ մեկ այլ օրենքով, օրինակ՝ Երևանի քաղաքապետի համար կնախատեսվի անուղղակի ընտրակարգ, ապա պարզ կլինի, որ այն ոչ թե հակասում է ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքին, այլ դրանից արված բացառություն է:

Երկրորդ՝ եթե իրավունքի սկզբունքը և դրանից սահմանված բացառությունն ամրագրված են միևնույն հոդվածի տարբեր մասերում, ապա սկզբունքի վերաբերյալ հոդվածում իրավական բացառության մասին վերապահում անելու անհրաժեշտությունը վերանում է (հարաբերական որոշակի վերապահում): Օրինակ՝ ուղղակի ընտրական իրավունքի սկզբունքն ամրագրված է հոդվածի առաջին մասում, իսկ Երևանի քաղաքապետի ընտրությունն անուղղակի ընտրակարգով անցկացնելու դրույթը (ուղղակի ընտրական իրավունքից կատարված բացառությունը) նախատեսված է նույն հոդվածի երկրորդ մասում: Թեև հոդվածի առաջին մասում նախատեսված չէ «բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի» ձևակերպումը, սակայն սկզբունքի և նրանից կատարված բացառության՝ միևնույն հոդվածում ամրագրված լինելու փաստից որոշակիորեն կարելի է բխեցնել օրենսդրի այն մտադրությունը, որ նա ընդհանուր կանոնից կատարել է բացառություն և ոչ թե թույլ է տվել նորմերի հակասություն (այս մասին հաջորդիվ):

Իրավունքի սկզբունքներից սահմանված բացառությունները *իրավաչափ են*, եթե հստակ է այն նպատակը (իրավական արժեքը), որից ելնելով իրավասու մարմինը շեղվում է իրավունքի սկզբունքների բովանդակությունը կազմող համամարդկային ու աքսիոմատիկ պահանջներից: Իրավունքի սկզբունքներից բացա-

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2019 1 - 2 (235-236)

ԴԱՏԱՎԱՐ
Իշխանություն



ռություն կատարելն իրավաբանից պահանջում է «ոսկերչական աշխատանք», քանի որ նա գործ ունի համընդհանուր նշանակության արժեքներից բացառություններ կատարելու հետ: Համամարդկային նշանակության գաղափարներից շեղվելը (դրանցից բացառություններ կատարելը) կարող է արդարացված լինել, եթե իրավական բացառությունը կոչված է պաշտպանելու այնպիսի իրավական արժեք, որը հատուկ իրավիճակում իրավունքի սկզբունքով պաշտպանվող արժեքի նկատմամբ աներկբայորեն նախապատվություն ունի: Օրինակ՝ սեռական բռնության անչափահաս զոհի լավագույն շահի պաշտպանությունը մրցակցում է հրապարակային դատաքննության սկզբունքի հետ, որի պայմաններում, բողոքի համար հասկանալի պատճառով, նախապատվությունը տրվում է երեխայի լավագույն շահի պաշտպանությանը և հանուն այդ նպատակի հրապարակային դատաքննության սկզբունքից կատարվում է բացառություն՝ օրենքով սահմանելով անչափահասների մասնակցությամբ գործերը ղեկավակ նիստում քննելու կարգ:

Մեկ այլ օրինակ՝ պատգամավորին անձեռնմխելիությամբ օժտելը մի շարք բարձր դատարանների կողմից ճանաչվել է որպես օրենքի առջև հավասարության սկզբունքից արված բացառություն (Եվրոպական դատարանի Մեծ պալատի «Կարտն ընդդեմ Թուրքիայի» (Kart v. Turkey, 03.12.2009 թ.) որոշումը, ՌԳ սահմանադրական դատարանի 20.02.1996 թ. № 5-Մ որոշումը)¹⁹: Եվրոպական դատարանը «Կարտն ընդդեմ Թուրքիայի» գործով պատգամավորի իմունիտետի՝ որպես օրենքից կատարված բացառության իրավաչափ նպատակը հիմնավորել է հետևյալ հանգամանքներով.

առաջին՝ անձեռնմխելիությունը օգնում է հասնելու խորհրդարանի անկախությանը՝ կանխելով քաղաքական շարժառիթներով պայմանավորված դատական հետապնդումները և դրանով իսկ պաշտպանելով ընդդիմությանը մեծամասնության հարձակումներից ու ճնշում-

ներից,

երկրորդ՝ խորհրդարանի անդամի դեմ վարույթ հարուցելը կարող է ազդել հենց խորհրդարանի գործունեության վրա և խաթարել նրա աշխատանքը²⁰:

Խիստ կարևոր է այն, որ Եվրոպական դատարանը պաշտոնատար անձին իմունիտետով օժտելը չի դիտարկում որպես ընդհանուր սկզբունքից «a priori» իրավաչափ բացառություն, այլ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում քննարկում է, թե նման բացառություն նախատեսելը Եվրոպական կոնվենցիայի տեսանկյունից ինչքանով է թուլատրելի, այդ իմունիտետը ինչ ծավալով է սահմանափակում այլ անձանց իրավունքները: Իմունիտետի իրավաչափությունը գնահատելիս պետք է հաշվի առնել նաև՝ իմունիտետը բացարձակ է, թե ոչ, արդյոք օրենսդրությամբ նախատեսված են իմունիտետը հաղթահարելու կառուցակարգեր, արդյոք իմունիտետով օժտելը սահմանափակված է պաշտոնատար անձի գործառնություններով, թե ոչ և այլն²¹:

Հանդիպում են դեպքեր, երբ հանրությունը միանշանակ չի ընկալում իրավունքի սկզբունքից կատարված բացառությունը, նրա համար հասկանալի չէ, թե տվյալ իրավիճակում իրավական բացառությունը ինչու պետք է իրավունքի սկզբունքով պաշտպանվող շահի նկատմամբ ունենա գերակայություն: Օրինակ՝ հայկական իրականության մեջ օրենքի առջև հավասարության և պատասխանատվության անխուսափելիության սկզբունքներից բացառություն կատարելու ու ՀՀ նախագահին իմունիտետով օժտելու հարցի իրավաչափությունը բուռն հանրային քննարկման առարկա դարձավ, երբ 2018 թ. հեղափոխությունից հետո 1998-2008 թթ. ՀՀ նախագահը, որը 2005 թ. ՀՀ Սահմանադրությամբ օժտված է քրեական հետապնդումից ֆունկցիոնալ անձեռնմխելիությամբ, 2008 թ. «Մարտի մեկի» գործով ներգրավվեց որպես մեղադրյալ, և նրա նկատմամբ, որպես խափանման միջոց, կիրառվեց կալանավորումը (այս գործի մասին կխոսվի հա-



ջորդիվ): Հայ հասարակության մի զգալի մասը քննադատում էր նախկին նախագահին անձեռնմխելիությանը օժտելու մասին սահմանադրական նորմը, նրանց համար հասկանալի չէր, թե ինչպես կարող է սահմանադրական կարգի դեմ բռնություն կատարած և 10 ցուցարարների մահվան պատճառ հանդիսացող որևէ պաշտոնատար անձի ազատել պատասխանատվությունից (հողվածը գրելու պահին որևէ դատական ակտով այս փաստերը հաստատված չեն):

Պետք է նշեն, որ 2005 թ. սահմանադրական բարեփոխումների ժամանակ, երբ առաջին անգամ նախատեսվեց ՀՀ նախագահի անձեռնմխելիության

մասին սահմանադրական կարգավորումը, այս հարցը հասարակական լայն քննարկման առարկա չդարձավ: Միգուցե շատերը կարծում էին, որ այդ նորմը դասվելու էր «մահացած նորմերի» շարքին և նախատեսված է ոչ թե կիրառելու, այլ գիտական մտավարժանքներ կատարելու համար: Թերևս քչերը կկանխատեսեին, որ տարիներ անց նախագահի անձեռնմխելիության մասին սահմանադրական նորմի իրավաչափությունը (սահմանադրականությունը), այն կիրառելու կամ չկիրառելու հարցը կդառնա հանրային լայն քննարկման առարկա:

Շարունակելի

¹ Այս մասին տե՛ս David Martinez-Zorrilla The Structure of Conflicts of Fundamental Legal Rights, Law and Philosophy, 2011, p. 2-3.
² Цит. по Тимошина Е.В., Правовое регулирование в ситуациях конкуренции прав человека: концепция «взвешивания» Р. Алекси // Правовое регулирование: проблемы эффективности, легитимности, справедливости: Сборник трудов международной научной конференции (Воронеж, 02-04 июня 2016 г.) Воронеж: НАУКА-ЮНИПРЕСС, 2016, с. 80.
³ Stijn Smet, Conflicts between Human Rights and the ECtHR: Towards a Structured Balancing Test p. 38 -58, Lorenzo Zucca, Law, Dilemmas, and Happy Endings // When human rights clash at the European Court of human rights. Conflict or harmony? Edited by Stijn Smet and Eva Brems. Oxford University press. 2017, p. 95 -112, Dirk Voorhoof, Freedom of Expression versus Privacy and the Right to Reputation: How to Preserve Public Interest Journalism // When human rights clash at the European Court of human rights. Conflict or harmony? Edited by Stijn Smet and Eva Brems. Oxford University press. 2017, p. 148-171, Leto Cariolou, Circumnavigating the Conflict between the Right to Reputation and the Right to Freedom of Expression. // When human rights clash at the European Court of human rights. Conflict or harmony? Edited by Stijn Smet and Eva Brems. Oxford University press. 2017, p. 171-192, Lorenzo Zucca, Conflicts of fundamental rights as constitutional dilemmas. Conflicts Between Fundamental Rights. Eva Brems (ed.) 2008. Intersentia Antwerp – Oxford – Portland, p. 19-37 // Olivier De Schutter and Francoise Tulkens Rights in conflict: The

European court of human rights as a pragmatic institution // Conflicts Between Fundamental Rights. Eva Brems (ed.) 2008. Intersentia Antwerp – Oxford – Portland, p. 169-215.
⁴ Васильковский Е.В., Учебник гражданского права. Выпуск I: Введение и общая часть. СПб.: Типография Контрагентства железных дорог, 1894, с. 151-152, Регельсбергер Ф. Общее учение о праве, Перевод И.А. Базанова, под ред. проф. Ю.С. Гамбарова, Типография И.Д. Сыгина, М., 1897, с. 292-293, Римское частное право: учебник для бакалавров и магистров/под ред. И.Б. Новицкого, И.С. Перегтерского, М., Изд. Юрайт, 2017, с. 79-82.
⁵ Магазинер Я.М., Избранные труды по общей теории права. СПб.: Изд. Р. Асланова «Юридический центр Пресс», 2006. <https://law.wikireading.ru/8964>.
⁶ Скурко Е.В., Принципы права: монография, М., Осъ - 89, 2008, с. 58.
⁷ Курс уголовного процесса, Под ред. Л.В. Головки, М., Статут, 2016, с. 263.
⁸ Пузиков Р.В., Доктринальное осмысление понятия, места и роли принципов права в современной правовой политике // Принципы российского права: общетеоретический и отраслевой аспекты, Под ред. Н.И. Матузова и А.В. Малько, Саратов: Изд-во СГАП, 2010, с. 104.
⁹ Антипов А.Н., Принципы, право, безопасность // Принципы права: проблемы теории и практики: Материалы XI международной научно-практической конференции, В 2-х ч. Ч. 2 (разделы V–X), М., РГУП, 2017, с. 280.
¹⁰ Ершов В.В., Принципы права: актуальные теоретические и практические проблемы // Принципы права: проблемы теории и прак-



тики: Материалы XI международной научно-практической конференции, В 2-х ч. Ч. 1 (разделы I–IV), М., РГУП, 2017, с. 28.

- ¹¹ Кашанина Т.В., Структура права: монография, М., Проспект, 2015, с. 250-251.
- ¹² Невинский В.В., Основы конституционного строя. Обеспечение достоинства личности. Конституционные принципы публичной власти: избранные научные труды, М., Фор-мула права, 2012, с. 36.
- ¹³ Ершов В.В., Теоретические и практические проблемы правового и индивидуального регулирования общественных отношений//Судебная власть: история и современность. Матер.трет. науч.-прак. конференции, Отв. ред. Ю.Ф. Беспалов, М., Проспект, 2014, с. 70, 74.
- ¹⁴ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 2018 թ. ՀՀ օրենքում այս կարգավորումը ցավոք բացակայում է, սակայն նախկին օրենքի իրավական ներգործության շնորհիվ հայ իրավաբանների, այդ թվում՝ դատավորների գիտակցության մեջ ձևավորվել է իրավունքի սկզբունքների բարձր իրավաբանական ուժի մասին կայուն դիրքորոշում:
- ¹⁵ Ելիշտ է օրենքի տեքստում բառացի նշվում է միայն *իրավունքի սկզբունքներից բխող նորմերի* նախապատվության մասին, իսկ իրավունքի սկզբունքների գերակայության մասին ուղղակի դրույթ նախատեսված չէր, սակայն մեր այս դիրքորոշումը հիմնված է հետևյալ տրամաբանության վրա: Իրավունքի սկզբունքից բխող դրույթների և իրավական այլ նորմերի հակասության դեպքում սկզբունքից բխող դրույթը նախապատվություն ունի, քանի որ մնան ուժով է նրան օժտել (մնան ուժ է հաղորդել) իրավունքի սկզբունքը: Եթե իրավունքի սկզբունքից կամ նրա ուժից ածանցվող իրավական դրույթը նախապատվություն ունի իրեն հակասող նորմի նկատմամբ, ապա իրավունքի սկզբունքը իրեն անմիջապես հակասող նորմի նկատմամբ չի կարող չունենալ գերակայություն:
- ¹⁶ Бержель Ж.Л., Общая теория права, Под общ. ред. В.И. Даниленко, Пер. с фр., М., Изд. дом NOTA BENE, 2000, с. 184.
- ¹⁷ Իրավունքում բացառության հարցերը համկողմանի քննարկել է Ս. Սումենկովն: Տե՛ս Սումենков С.Ю., Исключения в праве: теоретико-инструментальный анализ: монография; под ред. А.В. Малько, М., Юрлитинформ, 2016, Белоусов С.А., Суменков С.Ю. Исключения в праве как возможность достижения баланса либо обретения дисбаланса: общетеоретический анализ // Юридическая наука и практика: Вестник Нижегородской академии МВД России, 2018, № 3 (43), с. 45 -51.
- ¹⁸ Иншаков С.М., Казакова В.А., Конституционные коллизии уголовного права//Актуаль-

ные проблемы экономики и права. 2016, № 4 (40), URL: <https://cyberleninka.ru> (дата обращения: 30.07.2018), Трофимова Г.А., Право на ответственность высшего должностного лица страны//Бизнес в законе, 2013, № 6, URL: <https://cyberleninka.ru> (дата обращения: 30.07.2018), Агафонов В.В., Правовой иммунитет – нарушение или исключение из принципа равенства всех перед законом? Тюменская государственная академия мировой экономики, управления и права, 2012, № 1 (19), с. 8-10, Кишкембаев А.Б., Правовой иммунитет как исключение из принципа равенства всех перед судом, Наука, новые технологии и инновации, 2009, № 10, с. 93-95, Иоголевич Н.И., Конева Н.С., Правовые иммунитеты и конституционный принцип равенства перед законом и судом, Юридическая наука и правоохранительная практика. 2012, № 1, с. 34-41, Агапов И.М., Трунова Е. В., Уголовно-процессуальные иммунитеты как исключение из действия принципа равенства человека и гражданина перед законом и судом. В сборнике: антропология права и правовой плюрализм сборник статей международной научно-практической конференции, 2017, с. 14-16, Горелова О.А., Иммунитет как отступление от конституционного принципа равенства для отдельных категорий лиц. Современная наука: актуальные проблемы теории и практики. Серия: экономика и право, 2014, № 3-4, с. 57-60, Репьев А.Г., Правовой иммунитет, принцип равенства и юридическая ответственность: теоретико-правовой взгляд на проблему. Правовая культура, 2010, № 2, с. 153-160.

¹⁹ Օրինակ՝ Ռ-Գ-սահմանադրական դատարանը նշել է, որ Ռ-Գ Սահմանադրության 98-րդ հոդվածը, որն ամրագրում է Պետական դրամայի դեպուտատների և Դաշնային խորհրդի անդամների խմունիտետը, օրենքի և դատարանի առջև հավասարության մասին ընդհանուր սահմանադրական նորմից կատարված բացառություն է, սակայն այն պայմանավորված է պաշտամենտարիալի որպես դաշնային ներկայացուցչության և օրենսդիր մարմնի անդամի հատուկ կարգավիճակի պաշտպանությամբ

²⁰ Право на справедливое судебное разбирательство (уголовно-правовой аспект). Council of Europe/European Court of Human Rights, 2014, https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_6_criminal_RUS.pdf.

²¹ Այս մասին մանրամասն տե՛ս Агафонов В.В., Правовой иммунитет – нарушение или исключение из принципа равенства всех перед законом? Тюменская государственная академия мировой экономики, управления и права, 1 (19), 2012, с. 8-10.

RESUME - PEՅՈՒՄԵ

NON-SYSTEM CONFLICTS AND INTRA-SYSTEM CONFLICTS OF PRINCIPLES OF LAW

Artur Ghambaryan

*Head of the Department of Theory and History of State and Law,
Russian-Armenian University, Doctor of Law, Professor*

The legal norms enshrined in positive law often contradict the principles of law (human rights). In the event of such a contradiction, preference is given to the principles of law (regardless of whether directly or indirectly the principle of law is enshrined in positive law). Moreover, in the event of a contradiction between the two legal norms defining a particular behavior, preference should be given to the rule that follows from the principle of law.

The legal conflicts should be distinguished from the exceptions arising from the principles of law. The Principles of law cannot fail to have exceptions, otherwise the objective need for a differentiated legal regulation of social relations will be blocked. The establishment of exceptions to the principles of law must comply with the requirements of *certainty* and *legality*.

Within the system of legal principles, competition may arise between them. This competition is not solved by using traditional conflict-of-laws rules (*lex superior, lex specialis, etc.*), but by the method of balance (*weighing and balancing*), which does not imply the insignificance of one of the principles in conflict. The solution of the conflict between the principles of law depends on the circumstances of the particular case, the moral and philosophical ideology that has taken shape at a given time and in a given society. In order to make the right choice between competing legal values, the Judge must have a large-scale and metaphysical thinking. It is not by chance that legal disputes regarding the choice between competing legal principles are usually resolved not in the Courts of the General jurisdiction, but in Constitutional and International Courts, where the atmosphere of the philosophy of law prevails.

Taking in account that the principles of law are often identified with human rights or with the guarantees of human rights, it can be said that the conflict of human rights is a particular manifestation of conflicts of principles of law. Some human rights conflicts can be resolved through compromise, and some conflicts (constitutional dilemmas) cannot be resolved purely on the basis of legal reason. The human rights dilemma can be described as a conflict of human rights in which the right of one person is exercised by destroying the right of another person. The human rights dilemmas are endowed with two features: they have an element of *tragedy* and *incommensurability*. A sign of the tragedy of the human rights dilemma has a *moral* and *legal* content. The incommensurability of the human rights dilemma means that in this case it is impossible to combine the human rights of a person in conflict.

Keywords: *conflicts of law; conflicts of principles of law; exceptions to the principles of law; human rights conflicts; human rights dilemma.*

ВНЕСИСТЕМНЫЕ КОЛЛИЗИИ И ВНУТРИСИСТЕМНЫЕ КОНФЛИКТЫ ПРИНЦИПОВ ПРАВА

Артур Гамбарян

*Завкафедрой теории и истории государства и права
Российско-армянского университета,
заслуженный юрист РА, доктор юридических наук, профессор*

Правовые нормы, закрепленные в позитивном праве, часто противоречат принципам права (правам человека). В случае такого противоречия предпочтение отдается принципам права (независимо от того, принцип права закреплен в позитивном праве прямо или косвенно). Более того, в случае про-

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ 2019 1 - 2 (235-236)

ՀԱՏԱՎԱԾ
Իշխանություն



творения между двумя правовыми нормами, определяющими конкретное поведение, предпочтение следует отдавать той норме, которая вытекает из принципа права.

Правовые коллизии следует отличать от исключений, вытекающих из принципов права. Принципы права не могут не иметь исключений, а иначе будет заблокирована объективная необходимость дифференцированного правового регулирования общественных отношений. Установление исключений из принципов права должно соответствовать требованиям определённости и правомерности.

Внутри системы правовых принципов между ними может возникнуть конкуренция. Эта конкуренция решается не путем использования традиционных коллизионных норм (lex superior, lex specialis и др.), а методом равновесия (weighing and balancing), что не предполагает ничтожность одного из принципов, находящихся в конфликте. Решение конфликта между принципами права зависит от обстоятельств конкретного дела, моральной и философской идеологии, сложившихся в данное время и в данном социуме. Для правильного выбора между конкурирующими правовыми ценностями судья должен обладать масштабным и метафизическим мышлением.

Не случайно, что правовые споры касательно выбора между конкурирующими правовыми принципами, как правило, разрешаются не в судах общей юрисдикции, а в конституционных и международных судах, где превалирует атмосфера философии права.

Имея в виду, что принципы права часто отождествляются с правами человека или с гарантиями прав человека, то можно сказать, что конфликт прав человека является частным проявлением конфликтов принципов права.

Некоторые конфликты прав человека возможно решить путем компромисса, а некоторые конфликты (конституционные дилеммы) не могут решаться чисто на основе правового разума. Дилемму прав человека можно охарактеризовать как такой конфликт прав человека, при котором право одного человека осуществляется путем уничтожения права другого человека. Дилеммы прав человека наделены двумя особенностями: они имеют элемент трагичности и несоизмеримы (incommensurability). Признак трагичности дилеммы прав человека имеет нравственно-правовое содержание. Несοизмеримость дилеммы прав человека означает, что в этом случае невозможно сочетать права человека, находящегося в конфликте.

Ключевые слова: Коллизии норм права; конфликты принципов права; исключения из принципов права; конфликты прав человека; дилемма прав человека.

Բանալի բառեր - իրավունքի նորմաների կոլիզիաները, օրենքի սկզբունքների կոնֆլիկտները, իրավունքի սկզբունքների քաղաքությունները, մարդու իրավունքի կոնֆլիկտները, մարդու իրավունքի երկրներում: